

ԼՐԱԹԵՐԹ



Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնն (ՍԲԾԿ) իր գործունեությունը սկսել է 2008թ.-ից և աշխատում է 3 հիմնական ուղղություններով.

- **Ծառայությունների մատուցում.** մասնագիտացված սոցիալական, հոգեբանական և իրավաբանական աջակցության տրամադրում սեռական բռնության ենթարկված անձանց: 24/7 ռեժիմով գործում է նաև թեժ գծի ծառայությունը (+37477991280):
- **Իրազեկում.** ՍԲԾԿ-ն իրականացնում է իրազեկման լայնամասշտաբ աշխատանքներ և մասնագիտացված վերապատրաստումներ: Իր գործունեության 15 տարիների ընթացքում իրականացրել է ավելի քան 30 հանրային արշավ և վերապատրաստումներ ՀՀ բոլոր մարզերի մարզպետարանների, ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, իրավաբանների և այլ մասնագետների համար:
- **Շահերի պաշտպանություն.** ՍԲԾԿ-ի նպատակն է սեռական բռնության հիմնախնդրի հանդեպ վերաբերմունքը դարձնել առավել գենդերազգայուն՝ մասնավորապես նպաստելով դատաիրավական համակարգի կողմից զրհակենտրոն մոտեցման ներդրմանը, դարձնել օրենսդրական համակարգն առավել հասցեական:

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ

📍 Հայաստան, 0009, Երևան, Բաղրամյան 50գ, բն. 2

✉ sacc.arm@gmail.com

☎ +37498991280

Թեժ գիծ՝ +37477991280

ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Հուլիսի
1, 2023 -
հունիսի
30, 2024
.....
34 դեպք



Նշված ժամանակահատվածում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը հանձն է առել 34 դեպքի վարում. շահառուներից 32-ն՝ իգական, 2-ը արական սեռի անձինք են, 12-ն՝ անչափահաս:

Շահառուների մեծ մասը մեզ հետ կապ է հաստատել թե՛ գծի կամ սոցիալական կայքերում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի էջերի միջոցով, իսկ մյուսներն ուղղորդվել են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության կամ ՍԲԾԿ գործունեությանը ծանոթ անձանց/հասարակական կազմակերպությունների կողմից:

Բոլոր շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն սոցիալական աշխատողի կողմից. անչափահասների պարագայում առաջնային հանդիպումը տեղի է ունեցել ծնողի կամ խնամողի հետ:


Շահառուներից 10-ի դեպքով հարուցվել է քրեական գործ, ՍԲԾԿ փաստաբանը ներգրավվել է այդ գործերով աշխատանքներում և պաշտպանել սեռական բռնության ենթարկված անձանց շահերը դեպքերի նախաքննության և դատական գործընթացներում: 7-ն այս պահին գտնվում են նախաքննության փուլում, իսկ մյուս 3-ի գործով դատական պրոցեսն արդեն սկսվել է:

Այս ընթացքում շարունակվում են նաև նախկինում ՍԲԾԿ դիմած շահառուների դեպքերով ընթացակարգերը. մի քանիսն արդեն գտնվում են ավարտական փուլում, 4-ի գործով ունենք մեղադրական վճիռ:

2024 թ.-ի հունվարից ՍԲԾԿ-ն տրամադրում է նաև սեռական բռնության ենթարկված անձանց համար կացարանի ծառայություն: Շահառուներից 2-ը օգտվել են վերոնշյալ ծառայությունից:

Շահառուներից 9-ը ներկայումս ստանում են հոգեբանական աջակցություն մասնագետների կողմից: Հոգեբանական աջակցությունը շարունակվում է նաև նախկինում դիմած շահառուների հետ:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊԵՐՈ



Հունվար,
2024 -ից

.....
32 դեպքի
վարում

2024թ. -ի հունվարից՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն հանդես է գալիս որպես ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրակված կառույց, որն իրականացնում է «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագիրը: Վերջինիս շրջանակներում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը հանձն է առել թրաֆիքինգի 32 դեպքի վարում. շահառուներից 11-ը թրաֆիքինգի և շահագործման ենթարկված հավանական զոհեր են, 24-ը՝ Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից նույնացված անձինք.

նրանցից 19-ը արական սեռի անձինք են, 13-ը՝ իգական:

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն շահառուներին տրամադրել է սոցիալական աշխատողի խորհրդատվություն. շահառուներից 16-ին տրամադրվել է կացարան, 18 շահառուի տրվել է բնաիրային օգնություն, 7-ին տրամադրվել է բժշկական օգնություն և սպասարկում, 2-ին՝ հոգեբանական օգնություն, 12-ին՝ թարգմանչական ծառայություն, 1 հոգու՝ աջակցություն անհրաժեշտ փաստաթղթերի վերականգնման հարցում, 1 հոգու՝ օրենքով սահմանված պարտադիր կրթության ապահովում, 1 հոգու տրամադրվել է միանվագ դրամական փոխհատուցում, 10-ին՝ իրավաբանական օգնություն:


ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Նշված ժամանակահատվածում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասնագետների կողմից իրականացվել են մի շարք դասընթաց-հանդիպումներ բազմաբնույթ խմբերի հետ:



Հանդիպումներ ենք ունեցել «Երևան Հոմ քեյր» տնային առողջապահական խնամքի կազմակերպության խնամողների հետ՝ սեռական ոտնձգության հինախնդրի մասին իրազեկման նպատակով. մասնակցել են շուրջ 90 խնամողներ:

Տեղի են ունեցել հանդիպումներ Ընտանեկան բռնության ճգնաժամային կենտրոնների մասնագետների հետ: Հանդիպումների ընթացքում ՍԲԾԿ մասնագետը ներկայացրել է 4 երկրների (Հայաստան, Ուկրաինա, Վրաստան, Բոսնիա և Հերցեգովինա) կանանց կազմակերպությունների փորձառության շրջանակներում ստեղծված «Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում. Կանանց ՀԿ-ների փորձը և առաջարկությունները» գործիքակազմը:



Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը 2024թ.-ի հունվարից նախաձեռնել է իրազեկման հանդիպումներ Արցախից բռնի տեղահանված կանանց և աղջիկների հետ: Հանդիպումները նպատակ ունեն արցախցի կանանց շրջանում կանխարգելելու սեռական բռնության և թրաֆիքինգի ռիսկերը: Նշված ժամանակահատվածում հանդիպումներ են անցկացվել թվով 87 կնոջ հետ:

ԻՐԱՋԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

ՄԲՃԿ մասնագետը հանդիպումներ է ունեցել ԼԳԲՏ+ անձանց հետ սեռական բռնության և ոտնձգության վերաբերյալ իրազեկման, իսկ ՀՀ որոշ մարզերում գործող պետական և հասարակական կազմակերպությունների աշխատակիցների հետ՝ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ սեռական բռնության և ոտնձգության երևույթների քննարկման, ինչպես նաև այս անձանց հետ աշխատանքի զգայունության բարձրացման նպատակներով:


Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասնագետը դասընթաց-հանդիպումներ է ունեցել նաև ՀՀ մի շարք համալսարանների ուսանողների հետ՝ ընդհանուր շուրջ 200 ուսանող ՎՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ԵՊՀ-ի, Ուրարտու համալսարանի, Մ. Խորենացու անվան համալսարանի հոգեբանության, սոցիալական աշխատանքի և իրավագիտության բաժիններից: Մասնակիցներին ներկայացվել են Հայաստանում սեռական բռնության հիմնախնդիրն ու տեսակները, դրանց դեմ արվող քայլերը, խնդիրները, ինչպես նաև այդ թեմայի շրջանակներում մասնագիտական գործունեության առանձնահատկությունները:




ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Նշված ժամանակահատվածում սոցիալական հարթակներում ունեցել ենք իրազեկման արշավների մի քանի ավիք. յուրաքանչյուր ամիս փորձել ենք բարձրաձայնել առանձին հիմնախնդրի մասին՝ ուշադրություն հրավիրելով դրա տարբեր կողմերի վրա: Օրինակ՝ մեծ տարածում ստացավ ժողովրդական հայտնի կարծրատիպային արտահայտությունների հերքման հրապարակումները՝ սեռական բռնության և անչափահասների հանդեպ սեռական բռնության հիմնախնդիրների, գենդերային կարծրատիպերի, «համաձայնություն» հասկացության, LQFTS հիմնահարցերի մասին. հրապարակումներում՝ տարածված և մեզ ծանոթ արտահայտություններն էին, իսկ նկարագրության բաժնում դրանք հերքող դիտարկումներն ու վիճակագրությունը, ինչպես օրինակ. ↓


- Չեմուչում ես, համ, անում. գիտեմ՝ քեզ դգում ա, որ կոպիտ եմ հետդ ...



- Ի՛նչ ա նշանակում էրեխուն դուր չի գալիս, այ քեզ բաասն. քեռիս ա, թող մի հատ էլ շոյի էրեխուն:



- Դե հիմա տղա ա, պահի տակ ստացվել ա. աղջիկը պիտի առիթ չտար...



Այս ժամանակահատվածում բազմիցս խոսել ենք համաձայնության մասին՝ ինչ է իրենից ներկայացնում և ինչ կարևորություն ունի հարաբերություններում:

Մի ստիպիր, երբ ասում է՝ ոչ:




Համաձայնությունը շարունակական պրոցես է:



Սաափր, ուզում եմ նախ խոսել: Երբ միտքս փոխեմ արի ընտրություններս, հիմ:

Սիրով ես երբ ես... Կուզե՞ս... Ինչպե՞ս ես քեզ գգում...

Քեզ հարմար է այսպես... Այո... Ծարունակի՛ր...

Այսպես ինձ դուր է գալիս, բայց խնդրում եմ այ այսպես չանես... Լարվում եմ, արի դադարեցնենք:

Ո՛չ: Երբ այսպես դու՛ր է գալիս... Ինչն է քեզ գրգռում...



ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Նշանակալից էր LOVE IS CONSENT-ի (ՍԵՐԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ Է) մեր հրապարակումը, որտեղ «Love is» մաստակների 10 օրինակ նկարների միջոցով պատկերավոր ներկայացվում էր համաձայնությունը պրակտիկայում՝ առօրյա կյանքում:

Love is...

Սերը...



*...consent.
...համաձայնություն է:*

Consent is...


Համաձայնությունը...



*...clear communication, not guessing games.
...սարգ հաղորդակցություն է, ոչ թե գուշակելու խաղեր:*

Consent is...

Համաձայնությունը...



*...a conversation, not an assumption.
...երկխոսություն է, ոչ թե ենթադրություն:*

Consent is...

Համաձայնությունը...



...understanding that intoxication is not an invitation.

...հասկանալն է, որ անգիբրակից վիճակը հրավեր չէ:

ԱՊՐԻԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ապրիլը նշվում է որպես Սեռական բռնության մասին իրազեկման ամիս:



2024թ.-ի ապրիլին իրականացվել են նաև երկու հանդիպում-քննարկում՝ «Հաճույքը՝ որպես կնոջ հիմնարար իրավունք» և «Ինչպե՞ս արձագանքել, երբ տեղեկանում եք մտերիմի նկատմամբ կատարված սեռական բռնության դեպքի մասին», ապրիլի 24-ին՝ «Մեծ մորս դաջվածքները» ֆիլմի դիտում և քննարկում, ինչպես նաև սեռական բռնության մասին իրազեկող հանդիպումներ Երևանում և մարզերում:

2024թ.-ի ապրիլին Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնն իր գրասենյակում կազմակերպել է «Սեռական բռնության թանգարան» խորագրով բանավոր պատմությունների եռօրյա ցուցահանդես, որի ընթացքում հյուրերը ծանոթացել են սեռական բռնության 21 իրական պատմության հետ, ինչպես նաև հարթակ են ունեցել իրենց մտահոգություններն ու հետաքրքրող հարցերը քննարկելու ՍԲՃԿ աշխատակիցների հետ, կիսվելու իրենց մտքերով և էմոցիաներով:



Ապրիլ ամիսն ամփոփել ենք Stand Up+ միջոցառմամբ, որի շրջանակներում սթենդ ափի, բանավոր պատմության և դրեգ շոուի միջոցով հյուրերին ներկայացվել են սեռական բռնության հիմնախնդրի տարբեր կողմերը, ինչպես նաև հնարավորություն է տրվել միջոցառման մասնակիցներին արտահայտել իրենց էմոցիաները խոսքի, պարի, երգի միջոցով:

ՄԵՐ ԱՊԱՅՈՎ ՏԱՐԱԾՔԸ

Ապահով տարածք, որտեղ ձայները լսելի են, փոփոխությունները՝ ցանկալի:



Տարիների ընթացքում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնում ձևավորվել է ապահով տարածք, որտեղ յուրաքանչյուր մասնակցի ձայն լսելի է, յուրաքանչյուր միտք ու ապրում ստանում է արձագանք: Այստեղ մենք հավաքվում ենք՝ քանդելու խոչընդոտները և լսելի դարձնելու դեռևս չհնչեցված այն պատմությունները, որոնցով այսօրվա կանայք* ապրում են: Չլսված պատմությունները լսելի դարձնելով՝ մենք ազդում ենք կարևոր խնդիրների լուծման ընթացքի վրա՝ քաջալերելով ու ոգեշնչելով միմյանց:



Ապահով տարածքում վերջին մեկ տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ամենատարբեր թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ «Կուսաթաղանթի միջև և սեռական բռնությունը», «Նո՞ր եք սկսել հանդիպել՝ ճանաչի՞ր ռիսկերը», «Ընդունելով հաճույքը որպես կնոջ հիմնարար իրավունք», «Հոգեկան առողջությունը, կանանց* ու գենդերային հարցերը մարդու իրավունքների համատեքստում», «Գենդեր. գենդերային հիմքով խտրականություն», «Սահմաններն ու համաձայնությունը ինտիմ հարաբերություններում», «Ակտիվիզմը, այրման համախտանիշն ու կյանքի իմաստը». հանդիպումներին մասնակցել է ավելի քան 160 մարդ:



Մենք հավատում ենք, որ զրույցի ու կոլեկտիվ հոգածության շնորհիվ մենք կարող ենք ամոքվել:



ՑԱՆՑԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

- ✓ 2010թ.-ից՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի ստեղծման առաջին օրվանից, մինչ օրս ՄԲԾԿ-ն շարունակում է լինել Խորհրդի անդամ:
- ✓ 2018թ.-ից մինչ օրս Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը հանդիսանում է «Կանայք Ընդդեմ Բռնության Եվրոպա» ցանցի անդամ, իսկ 2023թ.-ի սեպտեմբեր ամսից «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի նախագահ Տաթևիկ Աղաբեկյանն ընտրվել է որպես ԿԸԲԵ ցանցի խորհրդի անդամ:
- ✓ 2018թ.-ից մինչ օրս ՄԲԾԿ-ն հանդիսանում է «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի» անդամ:
- ✓ 2019թ.-ից մինչ օրս ՄԲԾԿ-ն հանդիսանում է Վարչապետին կից «Կանանց հարցերով խորհրդի» անդամ:
- ✓ 2023թ.-ի հունիսի 15-ից ՄԲԾԿ-ն պաշտոնապես դարձավ «Տղամարդիկ ներգրավվում են Եվրոպա» ցանցի անդամ, որի նպատակն է փոխակերպել անհավասար իշխանության հարաբերությունները:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նշված ժամանակահատվածում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը (ՍԲՃԿ) ձեռնարկել է շահերի պաշտպանությանն ուղղված մի շարք գործողություններ՝ ուղղված սեռական բռնության դեմ պայքարին: Լրաթերթի սույն հատվածը ներկայացնում է նշված ժամանակահատվածում հիմնական նախաձեռնությունները, համատեղ ջանքերը և ռազմավարական արդյունքները:

1. Եվրոպական կառույցների և ազգային առաջնորդների հետ ներգրավվածություն | հուլիսի 16, 2023թ. և նոյեմբերի 20, 2023թ.

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն՝ որպես «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» անդամ, հյուրընկալել էր իր գրասենյակում Եվրոպական խորհրդարանի՝ Կանանց իրավունքների և գենդերային հավասարության հանձնաժողովի նախագահ պարոն Ռոբերտ Բիեդրոնին: Քննարկված առանցքային հարցերը ներառում էին սեռական բռնության վերաբերյալ պետական վիճակագրության բացակայությունը և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա»-ի վավերացման անհրաժեշտությունը: Հանդիպման արդյունքում Պարոն Բիեդրոնը նամակ է հղել վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ կոնվենցիան վավերացնելու և կոալիցիայի հետ հանդիպելու կոչով: Նոյեմբերին Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը՝ որպես «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» մաս, կոալիցիայի հետ համատեղ հանդիպեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ՝ քննարկելու Հայաստանում կանանց իրավունքների վերաբերյալ մարտահրավերները: Քննարկման ընթացքում ՍԲՃԿ նախագահ Տաթևիկ Աղաբեկյանը, ի թիվս այլոց, ներկայացրեց սեռական բռնության դեպքերում բժշկական մասնագետների կողմից ոստիկանություն պարտադիր հաղորդում ներկայացնելու խնդիրը: Վարչապետն ի գիտություն ընդունեց խնդիրը, իսկ ՍԲՃԿ-ի շահերի պաշտպանության թիմը մի քանի ամիս անց ԱԺ-ում մասնակցեց այս խնդրի վերաբերյալ փակ քննարկումներին:

2. Ձեկույց ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին | օգոստոս, 2023թ

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ հարցերով կոմիտեին է ներկայացրել «Սեռական բռնության աճող ճգնաժամը Հայաստանում» զեկույցը, որտեղ վերլուծում է ՀՀ-ում տիրող իրավիճակը սեռական բռնություն վերապրած անձանց իրավունքների տեսանկյունից և դրա ազդեցությունը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վրա:

3. Սեռական բռնության և ոտնձգությունների վերաբերյալ հիմնական զեկույցների ներկայացում | դեկտեմբերի 3, 2023թ

ՄԱԿ-ի՝ ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի ընթացքում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը ներկայացրել է երկու զեկույց՝ «Կանայք սեռական բռնության մասին. ընկալումներ և փորձառություն» և «Սեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում»: Այս զեկույցները բացահայտեցին Հայաստանում սեռական բռնության և ոտնձգությունների տարածվածությունը՝ ընդգծելով աջակցության ուժեղացված համակարգերի և արձագանքման կայուն մեխանիզմների անհրաժեշտությունը: Շնորհանդեսին ներկա էին պետական մարմինների, դեսպանատների, ՄԱԿ-ի, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

4. Մասնակցություն «ՄԱԿ-Կանայք»-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 68-րդ նիստին (CSW68) ԱՄՆ-ում | մարտի 11-18, 2024թ.

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի շահերի պաշտպանության թիմի անդամները մասնակցել են CSW68-ի հիմնական նիստերին, որոնք ընդգրկում էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են կիբերբռնությունը, զինված կոնֆլիկտների պայմաններում սեռական բռնությունը, աղքատությունը, գենդերային բռնությունը, և մարդկանց թրաֆիքինգը: Այս ներգրավվածությունը ուժեղացրեց Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի շահերի պաշտպանության ջանքերը և նպաստեց լավագույն փորձի փոխանակմանը:

5. Շահերի պաշտպանության օրակարգի մշակման մասին աշխատաժողով | մայիսի 27, 2024թ.

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնն անցկացրեց աշխատաժողով «Շահերի պաշտպանության օրակարգի մշակում» թեմայով, որը վարում էր գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման խորհրդատու և միջազգային փորձագետ Սառա Մարտինը: Մասնակիցները քննարկեցին քրեական արդարադատության համակարգի արձագանքման բարելավման և Արցախից բռնի տեղահանված կանանց հզորացման մարտահրավերները: Սեմինարը գործնական գործիքներ տրամադրեց շահերի պաշտպանության խնդիրների սահմանման և արդյունավետ հաղորդակցման ռազմավարությունների մշակման համար: Այս աշխատանքը շարունակելու համար նախատեսվում է հետագա վեբինար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված ժամանակահատվածում Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը զգալի առաջընթաց է գրանցել սեռական բռնության դեմ պայքարի ջատագովության ջանքերում: Միջազգային և ազգային ռազմավարական ներգրավվածությունների, քաղաքականության մշակման և կարողությունների զարգացման նախաձեռնությունների միջոցով Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը շարունակում է բերել դրական փոփոխություններ և աջակցություն ցուցաբերել սեռական բռնություն վերապրածներին՝ ապահովելով Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորումների և այլ մեխանիզմների համապատասխանեցումը կանանց իրավունքների համաշխարհային չափանիշներին: